ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-250-13.08.2019-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1215- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-250-13.08.2019-ԳԿ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է *օրենքով* բարձրացնել պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներին պետության կողմից տրամադրվող կրթաթոշակների չափերը՝ բարձր առաջադիմությամբ սովորողների համար սահմանելով 20000 դրամ, իսկ գերազանց առաջադիմությամբ սովորողների համար՝ 30000 դրամ:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) մշակել և շրջանառում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նախատեսվում է իրականացնել արմատական փոփոխություններ՝ կապված բուհերի ուսանողներին հատկացվող ֆինանսական աջակցության նոր սկզբունքների և մոտեցումների ներդրման հետ: Նախարարությունը նախաձեռնել է համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Կրթության մասին» ու «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, որոնցով կնախատեսվեն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսանողներին պետական կրթաթոշակի տրամադրման նոր մոտեցումներ և մեխանիզմներ:

Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների կրթաթոշակի ֆոնդը կազմում է մոտավորապես 1.7 միլիարդ դրամ:

Ներկայումս գործող Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թվականի ապրիլի 14-ի N 217-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (այդ

թվում՝ քոլեջների), մասնագիտական-տեխնիկական ուսումնարանների պետական պատվերով սովորող ուսանողների համար սահմանված է կրթաթոշակ՝ նվազագույնը 4.650 դրամից մինչև առավելագույնը 6.300 դրամի սահմաններում: Այսինքն՝ նշված օրենսդրական փոփոխության արդյունքում ծրագրի գծով նախատեսվում է ծախսի ավելացում՝ մոտավորապես 6 անգամ:

Անհրաժեշտ է նշել, որ պարզ չէ, թե ինչ հիմնավորումից ելնելով են հաշվարկվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի կողմից նշված կրթաթոշակների չափերը:

Պետք է հաշվի առնել նաև, որ «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ևս սահմանված են կրթաթոշակներ: Հետևաբար, նպատակահարմար չենք համարում օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը, քանի որ անհրաժեշտ է միանման մոտեցում ցուցաբերել կրթաթոշակ ստացող բոլոր արտոնյալ խմբերի նկատմամբ:

Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների կրթաթոշակների չափերն օրենքով սահմանելու՝ օրենքի նախագծով նախատեսված մոտեցումը կարող է խնդրահարույց լինել հետագայում կրթաթոշակների չափերի փոփոխության դեպքում՝ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելիս, մասնավորապես, հաշվի առնելով օրենքի ընդունման ընթացակարգերը, այդ թվում՝ ժամկետները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2019 թվականի N 1215 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արևիկ Անապիոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-250-13.08.2019-ԳԿ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 29
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների կրթաթոշակը բարձր առաջադիմությամբ սովորողների համար սահմանել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ, գերազանց առաջադիմությամբ սովորողների համար՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կրթության մասին»
ՀՀ օրենքում լրացում կատարելու նախագծի վերաբերյալ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում պարբերաբար փոփոխություններ են կատարվել, բայց մինչ օրս որևէ փոփոխություն չի կատարվել դրանց չափի հետ կապված:

Առ այսօր բակալավրիատում սովորող և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների կրթաթոշակը կազմում է 5.000 դրամ, իսկ գերազանց առաջադիմություն ունեցողներինը՝ 6.050 դրամ: Միայն բակալավրիատի ավարտական կուրսերում է, որ սովորական կրթաթոշակի չափը կազմում է 5.200 դրամ, իսկ գերազանցիկներինը՝ 6.300 դրամ:

Մագիստրատուրայում ունենք հետևյալ պատկերը՝ բարձր առաջադիմությամբ ուսանողները ստանում են 5.500 դրամ, իսկ գերազանց սովորողները՝ 6.300 դրամ:

Այսինքն, բակալավրիատում և մագիստրատուրայում կրթաթոշակների չափն ուղիղ 20 տարի է՝ 1999թ.առ այսօր, չի փոխվել: Համեմատության համար միայն նշենք, որ 1999թ. նվազագույն աշխատավարձը կազմում էր 5.000 ՀՀ դրամ, 2019թ.՝ 55.000 ՀՀ դրամ, մինչդեռ կրթաթոշակի չափի հետ կապված որևէ փոփոխություն տեղի չի ունեցել: Ավելին ներկայումս շրջանառության մեջ է դրված նվազագույն աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ նախագիծ, որին իր դրական եզրակացությունն է տվել նաև ՀՀ Կառավարությունը:

Միևնույն ժամանակ պետք է նշենք, որ Կառավարության կողմից ներկայացված ծրագրում իր արտացոլումն է գտել կրթության քաջալերումը՝ որպես մարդկային ներուժի զարգացման բաղադրիչ: Ակնհայտ է, որ կրթության քաջալերման

գործընթացում էական նշանակություն ունի նաև ֆինանսական խրախուսումը, ինչն արտահայտվում է, օրինակ, պետության կողմից տրամադրվող կրթաթոշակների պարբերաբար վերանայման տեսքով, ինչն իրականացվում է գրեթե բոլոր պետություններում:

Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում նվազագույն աշխատավարձը կազմում է 11.163 ռուբլի (մոտ 90.000 ՀՀ դրամ), կրթաթոշակը կազմում է 1.500 ռուբլի այսինքն մոտ 12.500 դրամ, բարձր առաջադիմության համար՝ 5.000-7.000 ռուբլի, այսինքն՝ 40.000-56.000 դրամ: Ղազախստանում նվազագույն աշխատավարձը կազմում է 28.284 տենգե (մոտ 37.000 ՀՀ դրամ), նվազագույն կրթաթոշակը 20.949 տենգե է, մոտ 30.000 դրամ, իսկ բարձր կրթաթոշակը՝ 24.091 տենգե, այսինքն մոտ 36.000 դրամ: Այսինքն, օրինակ նշված երկրներում, կրթաթոշակը բավականին բարձր է, ավելին դրանք գրեթե նվազագույն աշխատավարձի չափ են:

Իրավական ակտի ընդունման արդյունքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի առաջին հերթին Կառավարության ծրագրով սահմանված հանձնառությունը՝ կրթության քաջալերման վերաբերյալ: Միևնույն ժամանակ դրանով կապահովվի ուսանողների ֆինանսական վիճակի բարելավումը: